## 138. ԽՈՍԿԵՆ ՄԻՆԸ ՂՈՐԹ ԿԻՆԻ, ՄԻՆԸ՝ ՍՈՏ

*Մին թաքավըրի տը՛ւ ա կյամ ծ՛իրա՛ն երգյիրը շոռ կյամ, հազզար ու մին խոսկ ա ըսկանում, լա՛վ ու փիս պեներ ըն նաղլ անում, հու վըրի մինա՛ն մին փիս պեն ար ասում, էն փիս պեն ընողեն կլ՛ոխը դա՛ստին կտրել ար տամ։ Սաղ երգյիրն էտ թաքավըրերը ա՛ռնա՛վ ծասկում ա։*

*Մին օր էլ ծ՛իրա՛ն մարթուցը նհետ վըրի չորերը փոխած տը՛ւ ա կյամ ծ՛իրա՛ն երգյիրը շոռ կյա՛լի, տըեսնում ա, վըրի մարթիքյ ըստըեղ-ընդըեղ խոսում ըն, թա մըրի էս թաքավըրերը հինչ ա՞ ըսկացալ։*

*Մեհետ էլ մին մըեծ մարթու ծեն ա տամ, ասում.—Ա՜ հլիվուր, դողուրն ասա, թաքավըրերը էս լոխ դո՛ւզ ա՞ անում, թա չէ։ էտ հլիվուրն էլ ասում ա.—Քեզ ճինա՛նչո՛ւմ չըմ, գյո՛նգո՛ւմ չըմ, թա հու վը՞ս, հինչ ը՞ս, վըրի կլոխըս էլ կտրես, դո՛ւզը պիտի ասեմ։ Սա թա՝ ես թաքավըրերն ըմ։ էս հլիվուրը ասում ա.—Օզում ըս ինձ ըսպանես, հինչ օզում ըս ըրա, էս լոխ դո՛ւզ չըս անում, ամեն մարթու ըսածու հըվատում ըս, մինը ղորթ ա ասում, մինը՝ սոտ. ամենաշատը սոտ ըն ասում, պիտի հազզար հետ մտածես, լա՛վ տնտըղես, քու մարթուցը նհետ մըլըհաթ անես, տըեսնաս վըե՞ր խոսկ կինի սոտ, վըերը ղորթ, նոր էտ լոխ անես։*



22—432

Թաքավըրը ետ ա տըռնում, գյինձմ ծըրան Նազիր-վեզիրին նհետ նըստում, մտածում, թա հինչ պիտի անեն։ Սուրթ-սուրթա ծըրան հրամանն ա ետ յոր օնում, տրանա ետն էլ փիս պեն ընտ-գեն անա յել վըեր պեն ար ըսկանում, ծըրան մարթուցը հրվա-քում ար, մըլըհաթ անում, խըեխք-խըեխքու վըն տամ, նոր պատիժ տամ։ Երգյիրը ըսկսում ա հնդարդվիլը, ծրոնը պըկասում ա։

Մին օր էտ թաքավըրը շորերը փոխած տուն ա կյամ, թա տըեսնա ծըրան երգյիրումը հի՞նչ կա, հինչ չի կա։ Մուտանում ա մին քանի հվաքված մարթու խոսըցնում, նահանք թա՝ էս ա մըեր թաքավըրը մեհենգյ երգյիրը կարքեն հինդըրտըրալ ա, առաչ մին ըռնախում պեն ա իլա՜։

